ՌԱՄԱ մեթոդաբանություն

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի վրա ռիսկերը նվազեցնելու համար: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցություններն ու բարձրացնել ընդհանուր արտադրողականությունը: Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) համար ՌԱՄԱ մեթոդաբանությունը արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու ու էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև, ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ների շրջանում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«ՍԵՎԱՆԻ ԻՇԽԱՆ-2» ՓԲԸ - ՁԿՆԱԲՈՒԾԱՐԱՆ

Կազմակերպության մասին

Գտնվելու վայր՝ Ջրառատ
Հիմնական ապրանքատեսակներ՝ իշխանի տեսակներ (թարմ, պաղեցրած, ամառային, ֆիլե, գեղարքունի և ծիածանախայտ)
Աշխատակիցների քանակ՝10
Հիմնական շուկան՝ Հայաստան, Ռուսաստան, ԱՄՆ
Հիմնադրման տարեթիվ՝ 2016
Հավաստագրում՝ ISO 9001 և HACCP (ընթացքում է)

«Սևանի Իշխան-2»-ը ձուկ մշակող ընկերություն է, որը հիմնադրվել է 2014 թվականին «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնում և ձկնաբուծություն» ծրագրի շրջանակներում: Ընկերությունը հիմնված է Ջրառատ գյուղում և իր տարածքը վարձակալում է արտադրական տարածքում բնակվող տանտիրոջից: Ապագայում ընկերությունը նախատեսում է տեղափոխվել ավելի փոքր արտադրամաս: Ընկերությունը մասնագիտացած է թարմ պաղեցրած, թույլ աղած և սառը ապխտած ամառային, Գեղարքունիքի և ծիածանախայտ իշխանի արտադրության մեջ: Շուկայում ավելի մրցունակ դառնալու և ընդլայնվելու համար ընկերությունը սկսել է ISO 9001 և HACCP հավաստագրման ստանդարտների ձեռքբերման գործընթացը: Ծախսերը կրճատելու և էներգիա խնայելու շարժառիթով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» EU4Environment (2019-2024). շրջանակներում:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1
2 ՌԱՄԱ տարբերակ (կենտրոնացված ծախսերի կրճատման վրա)

2
Տարեկան թափոնների 84%-ի կրճատում

3
Տարեկան 5,763 եվրո տնտեսական խնայողություն

4
Կարճ հետգնման ժամկետ (մոտ երեք տարի)

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել ՌԱՄԱ տարբերակներ, որոնցից ընկերության կողմից առաջնահերթություն է տրվել հետևյալ երկուսին, որոնք միջինից բարձր ծախսատարության առաջարկություններ են:

ՌԱՄԱ տարբերակ 1: Մշակված ձկան մնացորդների օգտագործումը որպես կերային հավելում: Այս միջոցառումը զգալիորեն կնվազեցնի կոշտ թափոնների հեռացման տարեկան ծախսերը, որոնք գնահատվում են տարեկան 5500 եվրո: Միջոցառումը ներառում է ֆիլեի պատրաստման և ձկան ծխեցման արտադրական գործընթացների մնացորդների օգտագործումը և դրանք որպես ձկան և թռչնամսի համար կերային հավելում օգտագործումը: Հավելումները հետագայում կարող են նաև վաճառվել շուկայում:

ՌԱՄԱ տարբերակ 2: Փոքր հզորությամբ այլընտրանքային ջրի պոմպի տեղադրում: Այս միջոցառումը կնվազեցնի գոյություն ունեցող ջրի պոմպի (որն աշխատում է ամբողջ տարվա ընթացքում) օգտագործումից բխող էլեկտրաէներգիայի տարեկան ծախսերը: Թեև ընկերության առօրյա գործունեության համար ջուրն այնքան էլ անհրաժեշտ չէ, միջոցառումը հատկապես օգտակար կլինի ձմռանը, երբ պոմպը պետք է պաշտպանի ջրատարի համակարգը սառցակալումից:

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ
Հիմնական ՌԱՄԱ գործողություններ

ՏԱՐԲԵՐԱԿ 1	Մշակված ձկան մնացորդների օգտագործումը որպես կերային հավելում:
ՏԱՐԲԵՐԱԿ 2	Փոքր հզորությամբ այլընտրանքային ջրի պոմպի տեղադրում:

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿ	Ներդրում (եվրո)	Խնայողություն (եվրո/տարի)	Հետգնման ժամկետ (տարի)
Տարբերակ 1:	/	5,500	/
Տարբերակ 2:	450	263	3-5

Ռեսուրսների խնայողություն

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿ	Ջուր (մ³/տարի)/%
Տարբերակ 1:	/
Տարբերակ 2:	633,600/67

Աղտոտվածության ընդհանուր նվազում

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿ	Թափոններ (տ/տարի)/%
Ընդհանուր:	8.63/84

Ընկերության պատկերացումները

Ղեկավարվելով ՌԱՄԱ մեթոդաբանությամբ՝ կազմակերպությունն ունի ծախսերը զգալիորեն նվազեցնելու, էներգիան և ջուրը խնայելու ներուժ՝ կրճատելով իր արտադրական տարածքը և վերաօգտագործելով թափոնները: Ներկայումս ընկերությունը տարեկան վճարում է 20700 եվրո միայն իր տարածքը վարձակալելու համար: Քանի որ արտադրական տարածքը մեծ է, արդյունաբերական գործընթացի ընթացքում կազմակերպությունը պետք է ավելի շատ ծախսեր կատարի ջրի, էներգիայի և ախտահանիչների վրա:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության մաս և իրականացվել է ՄԱԿԱԶԿ-ի կողմից: Այս համատեքստում **«Սևանի Իշխան-2»-ը** միացել է «ՌԱՄԱ» ցուցադրական նախագծին, որը մշտադիտարկվելու է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև՝ ստուգելու առաջարկվող ՌԱՄԱ տարբերակների իրականացումը: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Լրացուցիչ մանրամասների համար այցելեք՝ **www.eu4environment.org**

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես ՄԱԿԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© – 2023 – ՄԱԿԱԶԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են. Լիցենզավորված է Եվրամիությանը՝ համաձայն պայմանների:

ՄԱԿ-ի Արդյունաբերական Զարգացման Կազմակերպություն
տիկին Տատյանա Չերնյավսկայա
«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
էլ. հասցե: t.chernyavskaya@unido.org

Կոնտակտներ:
Տարածաշրջանային Բնապահպանական Կենտրոն Կովկաս
Հասցե: Հայկական ազգային գրասենյակ
Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374-115-75-148